

ՄՍՍԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԵՆԵՏԻԿ ԿԸ ՄԵԾԱՐԷ Տ. ԼԵՒՈՆ ԱՐՔ. ՉԷՔԻԵԱՆԸ

Լեւոն Արք. Չէքիեան անուանեցաւ Պատուոյ անդամ Վենետիկի պատմական կարեւորագոյն հասաստութիւններէն «Սուրբ Մարկոսի Մեծ Դպրանոց»ին (Scuola Grande di San Marco):

«Սքուոլա» կամ «Սքոլա»ները Վենետկեան Հասարակապետութեան մէջ աշխարհականներու եղբայրակցութիւններ էին, որոնցմէ եօթը հատը «մեծ» որակումը կը կրէին իրենց բացառիկ կարեւորութեամբ, եւ որ կը գործէին որպէս մշակութային, գեղարուեստական, արհեստաւորական ճեմարաններ կամ ակումբներ, միանգամայն որպէս ընկերային օժանդակութեան, գրասիրութեան եւ զօրակցութեան կեդրոններ՝ ուր հեղինակաւոր վարպետներու առաջնորդութեամբ կը դարբնուէին արուեստագետներու, մտաւորական գործիչներու, կարեւոր արհեստաւորներու սերունդները: Այդ դպրանոցները էին միանգամայն, իրենց անդամներուն համար, կօնական եւ հոգեւոր կեանքի բովեր, իւշաքանրիւրը՝ իր յատուկ կանոնագրութեամբ: Գործնականին մէջ անոնք կերտեցին Վենետիկի համաշխարհային չափանիշով ակնառու եւ գազաթնադիր արուեստն ու մշակոյթը:

31 Յունուար Ծաբաթ երեկոյեան, մասնաւոր հանդիսաւորութեամբ շնորհուեցաւ Տ. Լեւոն Արք. Չէքիեանին՝ «Սուրբ Մարկոսի Մեծ Դպրանոց»ի Պատուոյ անդամի տիտղոսը, Դպրանոցի «Աւագ Հսկիչ» (Guardian grande) Դոկտ. Մարիոյ Փոյի կողմէ ի ներկայութեան դպրանոցի բազում անդամներու եւ բարեկամներու բազմութեան մը, որոնք կը լեցնէին Կարօտեալներու Ս. Ղազար եկեղեցին (San Lazzaro dei Mendicanti): Այս առթիւ ինքը Տ. Լեւոն Արք. Չէքիեան մատուցանեց հանդիսաւոր Ս. Պատարագ, մասնակցութեամբ Ս. Ղազարու Միսիթարեան Մայրավանքի Հայրերուն ու Եղբայրներուն եւ երգեցողութեամբ՝ Ս. Մարկոսի Մայր տանարի փոխ-խմբավար Մաէստրոյ Ճասթին Ռափաչիոլիի վարած երգչախումբին: Ճասթին Ռափաչիոլի առաջին կինն է որ, եօթը հարիւր տարիներէ ի վեր, արժանի նկատուած է այս յոյժ պատուաբեր պաշտօնին:

Իր քարոզին մէջ Գերպ. Չէքիեան անդրադարձաւ Վենետիկի եւ Հայութեան հազարամեայ կապերուն, որոնց պսակը եղած է Միսիթար Արքեպիսկոպոս եւ իր Միաբանութեան վայելած բացառիկ հիւրընկալութիւնը Վենետիկի մէջ: Ան ընդգծեց՝ որ իրեն ընծայուած այս պատիւը ինք կը նկատէ որպէս ընծայուած Միսիթարի տան, որ եղած է իր հոգեւոր օրրանը, եւ Միսիթարի տան ընդմէջէն՝ համայն Հայութեան:

Այս առթիւ, մասնաւոր հրաւերով Վիեննայէն Վենետիկ ժամաներ էր յայտնի դուդուկահար Մաէստրոյ Արամ Իփեկճեան, որ Ս. Պատարագի սկզբնաւորութեան եւ որոշ պահերուն դուդուկի հոգեպարար նուագը ընծայեց, կատարելով ի միջի այլոց, Տիեզերական Վարդապետ Ս. Գրիգոր Նարեկացիի «Հաւուն հաւուն»ը՝ մինչ Պատարագիչը կը կարդար նոյն Նարեկացիի հոգեբուխ աղօթքը Ս. Հոգւոյն ուղղուած, յատուկ՝ եպիսկոպոսական հանդիսաւորութեան:

PRESS RELEASE

VENICE HONOURS LEVON ARCH. ZEKIYAN

H.G. Levon Arch. Zekiyan has been nominated as a honorary member of the «Scuola Grande di San Marco», one of the most prestigious historical institutions of Venice.

«Scuola»s or «Schola»s were lay brotherhoods in the Venetian Republic of the Serenissima, and seven of them, because of their importance, bore the qualification «grande» (great). These Scholas worked as cultural, artistic, and artisanal academies and unions. They were at the same time centres of social aid, of charity and of solidarity. Outstanding masters guided the development of entire generations of artists, cultural operators, and artists in those schools. Each Schola had its own statutes, while at the same time, they promoted the religious and spiritual life of their members as unions. Actually, these Scholas forged the great Venetian art and culture, at an astounding worldly level.

On the evening of Saturday, 31st of January, the title of Honorary member of the «Scuola Grande di San Marco» was bestowed to H.G. Levon Arch. Zekiyan, during a special ceremony, by the «Guardian grande» (the Great Guardian) of the Schola, Dr. Mario Po'. The rite was attended by a great number of members of the Schola and of friends of Arch. Zekiyan who filled the church of San Lazzaro dei Mendicanti, the church of the Brotherhood. H.G. Levon Zekiyan celebrated the solemn Mass with the participation of the monks of the Island of San Lazzaro in the Venice Lagoon, the Headquarters of the Mekhitarist Congregation. The Liturgy was accompanied by a Choir led by M^o Justine Rappaccioli, the first woman, since seven hundred years, to act as «Maestro sostituto» of the Choir of Saint Mark's Basilica.

H.G. Zekiyan in his homily put in evidence the centuries-long ties between Venice and the Armenians at all levels of culture and of social life. The exceptional hospitality offered to Abbot Mekhitar and to his Congregation by the Serenissima of Venice was the crowning of this millennial relationship. Mgr. Zekiyan said that he considers the honour conferred to him as granted to Mekhitar's House and through this House to the Armenian people.

M^o Aram Ipekdjian, the well-known dudukist who was specially invited from Vienna for this occasion, played some pieces of duduk at the beginning and in some moments of the Holy Liturgy. He also accompanied with the melody of «Havoon havoon», the masterpiece of St. Gregory of Narek, Doctor universal, while the celebrant read the prayer of the saint addressed to the Holy Spirit, a prayer which is particular to the Mass celebrated by a Bishop.

SECRETARIAT
OF PADUS-ARAXES CULTURAL ASSOCIATION

Venice, Italy, 1st February, 2026